# «ԽԱՉՆ ԿԵՆԱՐԱՐ, ՈՐ ԵՂԵՒ ՄԵԶ ՓՐԿՈՒԹԻՒՆ»

*«Կ՚ապրինք...*
*Մեր նահատակներուն հոգիներուն համար այսօ՛ր մոմ կը վառենք...*
*Որ վաղը, բանաստեղծին հետ միասին, կարենանք ըսել.*
*-Մեռելներուս իբրեւ խաչ ես այս ծառը տնկեցի»:*

ՎԱՉԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍ

«Մեր պատմութեան ընդարձակ դաշտին վրայ հսկայ գերեզմանոց մը ունինք, որուն մեջտեղը հոգեղէն Յուշարձան մը կանգնած է, ու խաչ մը տնկուած է անոր վրայ, նման Գողգոթայի խաչին, կարճ արձանագրութիւն մը դրոշմուած է այդ կոթողին վրայ - «*1915, Ապրիլ 24. Աստ հանգչին մէկ միլիոն հայ նահատակներ*», այսքան միայն»[1]: Սակայն հայոց հոգեղեն հուշարձանը, ելնելով սեփական ժողովրդի պատմության ընդարձակ սահմաններից, խախտելով անձեռակերտ կոթողի ընդգրկունությունն ու անպարագրելիությունը, ձեռակերտ հուշարձաններ դարձած «շրջեց» Երկիր մոլորակով՝ սթափության կոչելով համայն մարդկությանը, ճշմարտության անեղծելի ձայնը հնչեցնելով ամենուր, թե անմահ է հայը, իր սեգ լեռների պես անկոտրում՝ նրա ոգին, իր երկրի պես հպարտ... Եվ աշխարհասփյուռ հայության առջև, ի վերջո՛, խոնարհվեց առաջադեմ մարդկությունը: Հասկացավ, որ Ապրիլ 24-ի արմատները դեպի մեզ են ձգվում Հայկ Նահապետից, Վարդանանց դյուցազնամարտից, Վահանյանց անմեկնելի հաղթանակից, որ Զեյթունի ու Վանի, Այնթապի ու Հաճնի և մյուս քաղաքների անհավասար մարտերը մեր փոքրիկ ածուի հերոսական մաքառումների ու ինքնապաշտպանության անեղծելի պատմության անօրինակ էջերն են:

Հասկացավ նաև Ապրիլ 24-ի մեծ խորհուրդը. այն հայի համար սգո օր չէ, այլ՝ ուխտի օր: Ողբի ու լացի օր չէ, այլ՝ քաջության ու հավատարմության, քրիստոնեական հավատքի ու աղոթքի, վերընձյուղման ու Տիրոջ փրկարար խաչի զորությամբ անմահության որդեգրման օր: Հենց այս խորհրդի մեծ գիտակցումով էլ ամեն տարի Ապրիլ 24-ին բարձր ու հնչեղ ղողանջում են Հայաստանյայց Եկեղեցու զանգերն ի Հայաստան, ի Արցախ և ի Սփյուռս աշխարհի, ու Ծիծեռնակաբերդի բարձունք են ելնում բոլորը, մեծ թե փոքր՝ մասնակցելու հայոց հավատքի ու անմահության դասին:

Եվ 1998 թվականի ապրիլի 24-ին այդ դասը կրկնվեց 83-րդ անգամ, որին մասնակցելու համար դեռ վաղ առավոտից հայ ժողովրդի երախտագետ զավակները, աշխարհի տարբեր ծագերից ժամանած, բարձրանում էին Ծիծեռնակաբերդի բարձունք՝ խոնարհության ու հարգանքի տուրք մատուցելու Մեծ եղեռնի

---

[1]Սիոն եպիսկոպոս Մանուկեան, Լուսաշող դեմքեր և կյանք և խորհուրդ, Բոստոն, 1949, էջ 111:

անմեղ զոհերի հիշատակին, ծնրադրելու նրանց արդար դատի առջև, որ մերօրյա հայորդու դավանանքն է:

Առավոտյան ժամը 11.00-ին իրենց խոնարհությունը բերեցին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, ՀՀ Ազգային Ժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը, ՀՀ վարչապետ Արմեն Դարբինյանը, ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, կառավարության անդամներ, բարձրաստիճան պաշտոնյաներ, զինվորականության ներկայացուցիչներ, ՀՀ հավատարմագրված արտակարգ և լիազոր դեսպաններ, դիվանագիտական այրեր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևորականաց դասը՝ դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանի նախագահությամբ:

Նահատակաց հուշարձանին ծաղկեպսակներ դրվեցին ՀՀ նախագահի, ՀՀ Ազգային Ժողովի, ՀՀ կառավարության, ՀՀ Սահմանադրական դատարանի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից: Պսակներ դրվեցին նաև ԼՂՀ իշխանությունների, Երևանի քաղաքապետարանի, քաղաքական կուսակցությունների, արտասահմանյան երկրների դեսպանությունների, Ամերիկայի Հայկական Համագումարի, Միլանի քաղաքային խորհրդի, ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների, տարբեր կազմակերպությունների, անհատ անձանց կողմից:

Ծաղիկներ դրվեցին նաև Սումգայիթում և Ադրբեջանի մյուս քաղաքներում կատարված մերօրյա ցեղասպանության զոհերի հուշաքարին:

Հավերժական կրակի մոտ Հայաստանի Հանրապետության ղեկավարությունը, հոգևորականաց դասը և հյուրերը մեկ րոպե լռությամբ նախ հարգեցին մեկ ու կես միլիոն զոհերի անմահ հիշատակը, որից հետո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հոգևորականաց դասը, հանուն Ամենայն Հայոց Հայրապետի, կատարեց հոգեհանգստյան կարգ, ապա հակիրճ խոսքով օրվա մեծ խորհուրդը մեկ անգամ ևս մեկնեց դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը: Դիմելով ներկաներին, Սրբազան Հայրը պատգամեց մշտավառ պահել Եղեռնի անմեղ զոհերի հիշատակը և հավատարիմ մնալ նրանց ուխտին:

***

Նույն այդ ժամին, երբ հավատավոր հայ ժողովրդի զավակների մի ստվար մասը խոնարհ հոգով բարձրանում էր դեպի Ծիծեռնակաբերդի բարձունք, Հայաստանյայց բոլոր եկեղեցիներում մատուցվում էր Սուրբ և անմահ Պատարագ՝ ի հիշատակ Ապրիլյան նահատակների և ի ոգեկոչումն Մեծ եղեռնի 83-րդ տարելիցի:

Սուրբ Պատարագ էր մատուցվում նաև Էջմիածնի Մայր Տաճարում: Օրվա պատարագիչն ու քարոզխոսն էր Գևորգյան Հոգևոր Ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Հայկազուն Ծ. վրդ. Նաջարյանը:

Օրվան պատշաճող գեղեցիկ քարոզում հայր սուրբը նախ անդրադարձավ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության խորհրդին՝ զուգահեռաբար հայոց պատմության 1915 թվականի ճերմակ էջը համադրելով քառասնօրյա Մեծ Պահքին հաջորդող շրջանի խորհրդի հետ:

Շարունակելով խոսքը, հայր սուրբն ի մասնավորի ասաց. «Ահա Զատկվա՝

հետհարության շրջանի մեջ է, որ գտնվում ենք զուգադիպությամբ այն դեպքին, որ մեզ՝ հատկապես քրիստոնյաներուս համար կյանքի, մահվան ու հարության իմաստ է բացահայտվում: Այդ նույն դեպքի շրջանում է, որ գալիս ենք որպես հայ ժողովուրդ, հատկապես հիշատակելու համար մեկ ու կես միլիոն մեր նահատակներին, որոնք ընկան վասն Հիսուսի և վասն հայրենյաց:

Սիրելի հավատացյալներ, մեր ժողովուրդը դժվար պատմություն է ունեցել: Մենք չենք նմանվում այն ժողովուրդներին, որոնք մի քանի հարյուր տարվա պատմություն ունեն: Մենք երկար ճանապարհ ենք անցել: Եվ միգուցե առաջին հազարամյակը մեր հեթանոսական միջավայրում, իսկ երկու հազարամյակը՝ քրիստոնեական լույսի ներքո: Եվ այդ երկու հազարամյակի ընթացքում հատկապես ունեցել ենք լավ օրեր, խաղաղ օրեր և ստեղծագործել ենք, սակայն եթե նայելու լինենք, պիտի տեսնենք, որ պատերազմները, ավերները ավելի շատ են եղել այն աշխարհագրական դիրքի պատճառով, որ ունի մեր Հայրենիքը:

Այստեղով հնուց ի վեր եկել ու անցել են հոմեացիները, բյուզանդացիները, հարավից՝ արաբները, արևելքից՝ պարթևները, սասանյանները և այնուհետև սելջուկները, մոնղոլները, թաթարներ և վերջին շրջաններում՝ նաև ռուսները:

Այստեղ՝ Հայաստան աշխարհում երբ քայլում ես, ամեն մի քար պատմություն է, մի դյուցազներգություն, և, ինչպես մի ալեզարդ ծերունի, չգիտի, իր կյանքի ո՛ր դեպքը հիշի, ո՛ր մեկը՝ անտեսի, մեզ համար էլ դժվար է՝ ո՞ր մեկը մենք ասենք և ո՞ր մեկը մոռանանք: Սակայն 20-րդ դարու սկզբի մի դեպք՝ Հայոց Եղեռնը, անմոռանալի պիտի մնա»:

Այնուհետև իր քարոզում հայր սուրբն անդրադարձավ նաև Օսմանյան կայսրությունում հայ ժողովրդի վիճակին, 1915-ին նախորդող ջարդերին, երիտթուրքերի կեղծավոր ու շողոքորթ քաղաքականությանը, առաջին աշխարհամարտի ժամանակ ծրագրված կերպով կազմակերպված համընդհանուր ջարդերին՝ չմոռանալով հայոց հերոսական ու անհավասար մարտերը, ինքնապաշտպանական կռիվները: Ապա շեշտեց Սարդարապատի հերոսական ճակատամարտում հայ ժողովրդի զավակների սխրանքը, անդրադարձավ նահատակ հոգևորականներին, նրանց, ովքեր Սուրբ Գիրքը զենքով փոխարինած, առաջնորդեցին սեփական ժողովրդին դեպի հաղթանակ: Հայր Հայկազունն առավել հանգամանորեն ներկայացրեց Եղեռնի հիշատակության, ոգեկոչման խորհուրդը՝ մերօրյա հայորդու համար: Արտագաղթից ծագող վտանգը ևս դուրս չմնաց հայր սուրբի քարոզից: Նա հիշեցրեց, որ «հայության հավիտենականության պայմանը ա՛յս հողն է, այստե՛ղ ապրող ժողովուրդն է»:

Լուսաշող մի հայացք նետելով դեպի հարազատ ժողովրդի ապագան, հայր սուրբը լավատեսական այս խոսքերով ավարտեց իր քարոզը. «Արդարության ժամը պիտի հնչի, և Եզեկիել մարգարեի նման տեսիլք ունեցող մարգարեներ պիտի վկայեն, թե այն օրը պիտի գա, երբ հայ շարականներ պիտի հնչեն Անիի Մայր Տաճարում, Աղթամարի Սուրբ Խաչում, Կարսի Առաքելոցում, Սսի եկեղեցիներում և ամեն տեղ, ուր գոյություն է ունեցել սուրբ խորան»:

Հավարտ Սուրբ Պատարագի Մայրավանքի բակում գտնվող Ապրիլյան նահատակների հիշատակն անմահացնող հուշարձան-կոթողի մոտ կատարվեց հոգեհանգստյան կարգ:

Հոգեհանգստյան կարգն ավարտվեց, սակայն մինչև ուշ գիշեր հայ ժողովրդի

ԻՋՑԱՌ ՎԽՈՅԽ ԺՈՌՈՂ ՎՂՈՇԺՈՂՀԱԷ
ՎԺՁԷԱՇ ՎՂԱՁՆՁ ԶՁՈ ՑԱԷՈԷ ՂԺԱԷՁԺԱՆԱԺՈՅՈ ՂՈԷՏՈԵՂՈԷՁԵԱԷ

բոլոր զավակները, ավագ թե կրտսեր, շարունակում էին խոնարհության ու հարգանքի ծաղիկներով բարձրանալ դեպի Ծիծեռնակաբերդ՝ հոգիներում մեկ ու կես միլիոն նահատակների սուրբ կտակը սեփական ազգին. հավատարիմ մնալ այն արդար դատին, հանուն որի իրենք նահատակվեցին, չդրժել քրիստոսավանդ այն հավատքի լույսը, հանուն որի իրենք զոհվեցին, սիրել հայոց Ազգն ու Հայաստանյայց Եկեղեցին:

Հայը կդադարի գոյատևելուց միայն այն ժամանակ, երբ թոշնի այդ ոգին, երբ մշուշվի նահատակաց հիշատակը: Սակայն մեր բոլոր հերոսամարտերի բյուր նահատակաց հոգիները Ոսկեղենիկ Եղիշեի բերանով պատգամում և պատգամելու են մեզ, որ «*Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն*»:

***ՄԱՐԻԱՄ ՎԱՐԴԱՆՅԱՆ***